

հոց երկուշարթի օրը, այն է Յունիս 26ին սկիզբ ըրաւ Մովսէս էջմիածնի նորոգութեան :

Սահակ կաթողիկոս, որ այս միջոցին Ասպահան կը գտնուէր, տեղեկութիւն առնելով թէ Մովսէս ձեռք բերած է էջմիածնի լուսարարութիւնը, բողոքեց Շահին, առարկելով թէ «զուլմ արարեալ էք ինձ, որ գէջմիածինն տուեալ էք Մովսէսին» : Արքունի քարտուղարը (դիւանբէկ) կը պատասխանէ . «Թէպէտ տուաք նմա գէջմիածինն, զնորին լուսարարութիւնն տուաք եւ ոչ զկաթողիկոսութիւնն . . . դու զքոյն վարեա եւ նա զիւրն» : Զուր տեղ բախեց նաեւ «մեծամեծաց դուռները», անոնց միջնորդութեամբ խափանելու Մովսիսի ձեռք բերած իշխանութիւնը (Դաւր. 235) : Այս անօգուտ ջանքերէ ետքը Դաւրէժի վրայէն անցաւ Սոյ . իրեն հետ էին զուլերը, որոնք 100 թուման տուրքը գանձելու համար նշանակուած էին Շահէն : Սահակին մտադրութիւնն էր Սոյէն զաղտազոյի փախչիլ Վան . նկատելով որ 100 թուման պարտքը տարուէ տարի անվճար մնալով բարձրացած է արդէն 800 թումանի, եւ դեռ օր աւուր կը բարձրանայ . միւս կողմանէ էջմիածինը գրաւուած է Մովսէս վարդապետէն, իսկ «ամենայն ազգն Հայոց հեռացեալ ի բաց կացին յինքենէ» . ուստի «ոչ այլ ինչ իրօք լինի փրկութիւն նմա, եթէ ոչ փախստեամբ» : Մինչ այս խորհրդեան վրայ էր Սահակ, լուր